Հավելված N91
Պետական վերահսկողական
ծառայության գլխավոր քարտուղարի
2025թ. նոյեմբերի 17 -ի N 724-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԱՎԱԲԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) իրավական ապահովման և օրինականության վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր իրավաբան (այսուհետ՝ Գլխավոր իրավաբան) (ծածկագիր՝ 52-24.10-Մ1-5):

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր իրավաբանը անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր իրավաբանի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր իրավաբաններից մեկը կամ ավագ իրավաբանը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Մ. Մաշտոցի պողոտա 47

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) Ծառայության ղեկավարի կողմից տրված հանձնարարագրերի կամ հրամանների հիման վրա պետական կառավարման համակարգի մարմիններում, տարածքային կառավարման մարմիններում (մարզպետ, մարզպետի աշխատակազմ) և պետական հիմնարկներում իրականացնում է վերահսկողություն.
2) իրականացնում է ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, առցանց ստացվող հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով ստացված տեղեկատվությունը համադրում է վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ.
3) իրականացնում է վերահսկողություն՝ տեղական ինքնակառավարման մարմիններում տրամադրված սուբսիդիաների, սուբվենցիաների կամ դոտացիաների կառավարման

օրինականության կամ դրանց տրամադրման համար հիմք հանդիսացող տեղեկատվության արժանահավատության գնահատման նկատմամբ.

4) իրականացնում է վերահսկողություն հարյուր տոկոս պետական սեփականություն հանդիսացող իրավաբանական անձանց մոտ ՝ դրանց գործունեության օրինականության նկատմամբ.

5) իրականացնում է վերահսկողություն Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ իրավաբանական անձանց մոտ՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությունից ծագող և լիազոր մարմնի, ինչպես նաև կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմնում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի լիազորությունների կատարման նկատմամբ.

6) իրականացնում է վերահսկողություն Հայաստանի Հանրապետության կամ պետական ոչ առևտրային կազմակերպության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների կողմ հանդիսացող անձանց մոտ, իսկ գործարքի կողմ հանդիսացող անձի իրավունքները և պարտականություններն այլ անձի վերապահված լինելու դեպքում՝ վերջինիս մոտ՝ Հայաստանի Հանրապետության կամ պետական ոչ առևտրային կազմակերպության մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքներից բխող և դրանց պայմանների կատարման նկատմամբ, բացառությամբ պայմանագրից բխող ցուցումներ տալու, որն իրականացվում է պայմանագրով Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող լիազոր մարմնի միջոցով, իսկ օտարերկրյա իրավաբանական անձանց և, օտարերկրյա իրավունքին համապատասխան, իրավաբանական անձ չհամարվող կազմակերպությունների մասնակցությամբ քաղաքացիաիրավական գործարքների դեպքում՝ վերահսկողություն իրականացնել համապատասխան կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված (հաշվառված) մասնաճյուղի կամ ներկայացուցչության մոտ.

7) պետությունից, համայնքից, պետական, համայնքային ոչ առևտրային կազմակերպություններից, պետության, համայնքների հիսուն տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից նվիրաբերության կամ դրամաշնորհի կարգով միջոցներ ստացած իրավաբանական անձանց կամ այլ անձանց (այդ թվում՝ մարմինների) մոտ իրականացնում է վերահսկողություն դրանց շրջանակներում կազմակերպված գնումների գործընթացների նկատմամբ.

8) տեղական ինքնակառավարման մարմիններում, պետական կամ համայնքային հիմնարկներում իրականացնում է վերահսկողություն գնումների գործընթացը կանոնակարգող օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

9) իրականացնում է վերահսկողություն պետական կառավարման համակարգի մարմինների, ինչպես նաև դրանց ենթակա կազմակերպությունների կողմից

տրամադրված հատկացումների, վարկային միջոցների, փոխառությունների և նվիրաբերությունների նպատակային օգտագործման նկատմամբ.

10) վերահսկվող օբյեկտների կողմից, այդ թվում՝ պետական միջոցների կառավարման կամ ձևավորման, հակաօրինական գործողությունների, չարաշահումների վտանգի կամ հնարավոր վնասների առաջացման ռիսկերի դեպքերում նշված ռիսկերի հիմնավորվածությունը պարզելու, գնահատելու կամ դրանք նվազագույնի հասցնելու նպատակով առաջարկություններ է ներկայացնում գործողությունները, գործարքների կատարումը, ինչպես նաև դրանց կնքմանն ուղղված ընթացակարգերը կամ գործողությունները կասեցնելու վերաբերյալ.

11) իրականացնում է հանդիպակաց ուսումնասիրություններ.

12) իրականացնում է վերահսկողություն՝ վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման և դրանց կատարման նկատմամբ.

13) Ծառայության ղեկավարի հանձնարարությամբ հանդես է գալիս վարչական և այլ մարմիններում ու կազմակերպություններում Ծառայության կամ Վարչության անունից,

14) իրականացնում է Ծառայության կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից կազմված փաստաթղթերի ուսումնասիրման և վերջնականորեն նշագրման աշխատանքների իրականացումը, որի արդյունքում ներկայացնում է առաջարկություններ, դիտողություններ կամ եզրակացություններ.

15) իրականացնում է մասնագիտական կարծիքի, իսկ համապատասխան հանձնարարականի հիման վրա նաև մասնագիտական եզրակացության տրամադրում, այդ թվում՝ օրինականության մասով՝ այլ ստորաբաժանումների կողմից պետական վերահսկողության արդյունքներն ամփոփող տեղեկանքների ու զեկույցների վերաբերյալ.

16) իրականացնում է Ծառայության գործունեության ոլորտներին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների և այլ իրավական ակտերի նախագծերի, ինչպես նաև առանձին հարցերի հետ կապված եզրակացությունների և առաջարկությունների ներկայացումը.

17) իրականացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված վարչական վարույթների իրավական ապահովումը.

18) իրականացնում է Ծառայության շահերի ներկայացումը Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններում.

19) իրականացնում է համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ:

Իրավունքները՝

1) վերահսկողության շրջանակներում ստանալ անհատույց և ազատ հասանելիություն վերահսկվող օբյեկտում կամ դրա պաշտոնատար անձի մոտ գտնվող և իրականացվող ուսումնասիրությանն առնչվող բոլոր թղթային կամ էլեկտրոնային տեղեկատվական շտեմարաններին ու համակարգերին, տեղեկություններին և փաստաթղթերին.
2) ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, առցանց ստացվող հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով ստացված տեղեկատվությունը համադրել վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ.
3) կատարել ապրանքանյութական արժեքների գույքագրում՝ առանց վերահսկվող օբյեկտի բնականոն գործունեությունը խաթարելու.
4) մուտք գործել վերահսկվող օբյեկտի տարածքներ՝ առանց վերջիններիս ներքին իրավական ակտերով սահմանված սահմանափակումների.
5) վերահսկվող օբյեկտներից, դրանց պաշտոնատար անձանցից ստանալ Ծառայության գործառույթներին առնչվող տեղեկություններ, փաստաթղթեր, տեղեկանքներ, պարզաբանումներ.
6) կատարել այցելություններ երևույթների, իրադարձությունների, իրողությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման և գնահատման նպատակով, բացառությամբ հանդիպակաց ուսումնասիրությունների իրականացման դեպքերի.
7) կատարել տարածքների, շինությունների, փոխադրամիջոցների, առարկաների, փաստաթղթերի, սարքավորումների (այդ թվում՝ էլեկտրոնային) հետազոտում, տեղատեսություն, որի ընթացքում կարող են իրականացվել լուսանկարահանում, տեսաձայնագրառում, ձայնագրառում, փաստաթղթերի պատճենահանում, բացառությամբ հանդիպակաց ուսումնասիրությունների իրականացման դեպքերի.
8) վերահսկողությանը մասնակից դարձնել վերահսկվող օբյեկտի վերահսկողության ենթակա ոլորտի կամ համապատասխան բնագավառի հանրային ծառայողների (վերահսկվող օբյեկտի ղեկավարի համաձայնությամբ և միայն տեխնիկական աջակցության նպատակով), ներքին աուդիտորների (տվյալ վերահսկվող օբյեկտի ղեկավարի համաձայնությամբ), մասնագետների, փորձագետների և գիտական հաստատությունների ներկայացուցիչների, ինչպես նաև ժամանակավոր աշխատանքային խմբեր կազմավորելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Վարչության պետին.
9) Ստանալ հասանելիություն վարչական վարույթի իրականացման համար անհրաժեշտ նյութերին.
10) կատարել ապրանքների, աշխատանքների, ծառայությունների փաստացի ձեռքբերման գների հետ համադրմանն ուղղված նույն կամ նույնանման ապրանքների, աշխատանքների, ծառայությունների, ինչպես նաև ապրանքների՝ օրենսդրությամբ սահմանված վաճառքի չափորոշիչների պարզելուն ուղղված հարցումներ:

Պարտականությունները՝

1) ամփոփել Ծառայության վերահսկողության ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տրամադրված համապատասխան մասնագիտական եզրակացությունները, դիտողությունները և առաջարկությունները.
2) ամփոփել ստացված դիմումների, բողոքների, առաջարկությունների, առցանց ստացվող հարցումների, ինչպես նաև օրենքով չարգելված այլ եղանակների միջոցով ստացված տեղեկատվության համադրումը վերլուծության առարկայի կամ վերլուծության ենթակա երևույթի փաստացի վիճակի հետ.
3) Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ վերահսկողության արդյունքներից բխող պահանջվող միջոցառումների վերաբերյալ.
4) հավաքագրել վերահսկողության ընթացքում տեղեկությունները և գնահատել բոլոր հանգամանքները.
5) կատարված և ավարտված գործողությունների կամ դրանց փուլերի երկրորդման եղանակով ստացված արդյունքները համադրել հաշվառմամբ արտացոլված արդյունքների հետ.
6) վերլուծել ավարտված վերահսկողության արդյունքները, ամփոփել և դրանք ներկայացնել Վարչության պետին.
7) պետական կառավարման համակարգի մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վերահսկվող ոլորտներում վերահսկողական գործառույթներ իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում առաջարկություն ներկայացնել Վարչության պետին.
8) կատարել վերահսկողության արդյունքների վերլուծություն արձանագրված խախտումների, խնդիրների, դրանց պատճառների, հանգամանքների ու հետևանքների վերաբերյալ ՀՀ վարչապետին տեղեկանքներ և զեկույցներ ներկայացնելու աշխատանքների համար.
9) ներկայացնել Ծառայության շահերը Հայաստանի Հանրապետության բոլոր դատարաններում.
10) իրականացնել վարչական վարույթների իրականացմանն ուղղված աշխատանքների իրավական ապահովումը.
11) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներ կատարել.
12) ՀՀ վարչապետին տեղեկանքներ և զեկույցներ ներկայացնելու աշխատանքների համար՝ ամփոփել իրականացված վերահսկողության արդյունքներով վերլուծության աշխատանքները, դրանց վերաբերյալ արձանագրված խախտումները, խնդիրները,

դրանց պատճառները, հանգամանքներն ու հետևանքները և ներկայացնել վարչության պետին:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

1	Ուղղություն	Գործարարություն, վարչարարություն և իրավունք
2	Ոլորտ	Իրավունք
3	Ենթաոլորտ	Իրավունք
4	Մասնագիտություն	042101.00.6 իրավագիտություն կամ 042101.00.7 իրավագիտություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1) Ծրագրերի մշակում.
2) Խնդրի լուծում.
3) Հաշվետվությունների մշակում.
4) Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն.
5) Բարեվարքություն:

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1) Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն.
2) Ժամանակի կառավարում.
3) Բանակցությունների վարում.
4) Փաստաթղթերի նախապատրաստում:

4. Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: